ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Կոմուս» ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/277 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակային ծրագրերի շրջանակներում սոցիալապես անապահով թվով 250 դպրոցահասակ 1-7-րդ դասարան հաճախող երեխաներին տրամադրելու համար անհրաժեշտ է ձեռք բերել թվով 250 հատ (125 տղա, 125 աղջիկ) պայուսակ գրենական պիտույքներով, որից 125 հատ (65 տղա, 60 աղջիկ) նախատեսված 1-4-րդ դասարանների համար, իսկ 125-ը (65 տղա, 60 աղջիկ)՝ 5-7-րդ դասարանների համար՝ յուրաքանչյուրը հետևյալ պարունակությամբ. Պայուսակ աշակերտական - 35-45 սմ լայնությամբ և 40-45 սմ բարձրությամբ, 10-12 սմ խորությամբ, քաշը՝ 300-400 գրամ, հարմարեցված ձեռքով բռնելու (բռնակ) և ուսերին գցելու համար: Պայուսակը դրսից պետք է ունենա առնվազն երկու կայծակաճարմանդե գրպաններ, որոնք պետք է լինեն ամուր և որակյալ, դրանց բռնակները երկաթյա կամ չճկվող ամուր հումքից:Պայուսակը ներսից պետք է բաժանված լինի երկու կամ երեք մասի: Պայուսակի ներսում նախատեսված լինի շղթայով գրպանիկ՝ մանր իրերի համար, որի չափերն են 15-20 սմ, շղթան և շղթայի գլխիկը լինի մետաղական կամ չճկվող ամուր հումքից: Պայուսակը պետք է պատրաստված լինի բարձրորակ, չթրջվող ամուր գործվածքից, պոլիէսթեր 100%, առանց յուրահատուկ հոտի, էկոլոգիապես մաքուր (գնորդի պահանջով ներկայացվի սերտիֆիկատ՝ էկոլոգիապես մաքուր հումքի վերաբերյալ), առավելագույնս ջրադիմացկուն, զերծ տարատեսակ քիմիական ներկանյութերի հոտերից, հետնամասը պետք է լինի հատուկ օրթոպեդիկ գոգավորությամբ (գնորդի պահանջով ներկայացվի համապատասխան սերտիֆիկատ օրթոպեդիկ կառուցվածքի վերաբերյալ): Պայուսակի ուսակալները պետք է լինեն ամուր և փափուկ ամրակներով: Պայուսակի առջևի մասում նախատեսված լինի

	շղթայով դարակ 25-30սմ չափերով: Պայուսակի մեջքի, հատակի և առջևի հատվածները ունենան չճկվող ամուր ներդիրներ: Պայուսակի երկու կողմերից պետք է լինեն հատուկ տեղեր շշով հեղուկի համար: Պայուսակի վրա ցանկալի է ամրացված լինի բեյջ՝ տվյալներ լրացնելու համար: Պայուսակի ներսի հատվածը պետք է որակյալ աստառապատված լինի: Պայուսակի գույնը և նկարազարդումը՝ ըստ գնորդի: Յուրաքանչյուր պայուսակ պետք է պարունակի՝ Տետր – 3 հատ առնվազն 96 էջանի, վանդակավոր, բարձր որակի: Տետր – 3 հատ առնվազն 96 էջանի, տողանի, բարձր որակի: Տետր – 4 հատ առնվազն 48 էջանի, վանդակավոր, բարձր որակի: Տետր – 4 հատ առնվազն 48 էջանի, տողանի, բարձր որակի: Տետր –3 հատ առնվազն 24 էջանի, վանդակավոր, բարձր որակի: Տետր –3 հատ առնվազն 24 էջանի, տողանի, բարձր որակի: Տետր – 5 հատ առնվազն 12 էջանի, վանդակավոր, բարձր որակի: Տետր – 5 հատ առնվազն 12 էջանի, տողանի, բարձր որակի: Գրիչ – 7 հատ, գնդիկավոր, փակիչով, կապույտ գույնի: Գրիչ – 3 հատ, գնդիկավոր, փակիչով կարմիր գույնի: Գրչատուփ – 1 հատ, պատրաստված լինի չճկվող ամուր հումքից, բացվի գրքաձև՝ 180 աստիճանի, փականը (ցեպ) և գլխիկը լինի մետաղյա կամ չճկվող ամուր հումքից, չափսերը՝ երկարությունը առնվազն 20 սմ, լայնությունը՝ առնվազն 12 սմ, բարձրությունը առնվազն 2,5 սմ: Գրչատուփի բացված կողմերի վրա ներսից կարված լինեն ռեզինե ժապավեններ՝ բաժանարարներով, նախատեսված գրիչների, մատիտների, ռետինի, սրիչի և այլ գրենական պիտույքները ամրացնելու և տեղավորելու համար: Պատրաստված էկոլոգիապես մաքուր, ամուր, որակով հումքից: Գունավոր մատիտ – 1 տուփ, առնվազն 24 գույն (ոչ երկկողմանի), 6 անկյուն կամ եռանկյունե կտրվածքով: Մատիտների տուփը լինի հաստ ստվարաթղթից, մատիտների երկարությունը առնվազն 18 սմ, փափկությունը HB, պատրաստված էկոլոգիապես մաքուր հումքից: Քանոն – 1 հատ, ուղիղ գծաբաժանումներով, հարթ եզրերով, լավ մշակված և հղկված, թեթև լաքապատ, երկկողմանի գծանշումներով, գծանշումների մակերեսը ուռուցիկ, երկարությունը՝ առնվազն 30 սմ: Ռետին – 1 հատ, նախատեսված մատիտով գրվածները ջնջելու համար: Սրիչ – 1 հատ, մատիտ սրելու համար: Նկարչական ալբոմ - 1 հատ, առնվազն 32 թերթ, հաստ ստվարաթղթե կազմով: Վերոնշյալ բոլոր ապրանքները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետությունում գործող ազգային ստանդարտներին (ՀՍՏ) պայմաններին: Առաջարկվող բոլոր ապրանքները նախապես համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի պատասխանատու ստորաբաժանման հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Комус в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/277 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	